# ՀԱՏՈՒԿ ՏԵԽՆԻԿԱՅԻ ՎԱՐՁԱԿԱԼՈՒԹՅԱՆ ՊԱՅՄԱՆԱԳԻՐ

գ. Այգեզարդ 19.06.2025թ.

<<ՊՐՈՖԱՐՏ>> ՍՊԸ ի դեմս տնօրեն Վահե Մարգարյանի «վարձատու», մի կողմից, «ՆԱՏԱԼԻ ՇԻՆ» ՍՊԸ – ն, հետագայում՝ «Վարձակալ», ի դեմս տնօրեն Ա. Ավետիսյանի, որը գործում է համաձայն ընկերության կանոնադրության, մյուս կողմից, կնքեցին սույն պայմանագիրը, որը գործում է անժամկետ.:

## 1. ՊԱՅՄԱՆԱԳՐԻ ԱՌԱՐԿԱՆ ԵՎ ԱՅԼ ԴՐՈՒՅԹՆԵՐ

1.1 Վարձատուն պայմանավորվում է վճարի դիմաց վարձակալական հիմունքներով ժամանակավոր օգտագործման համար տրամադրել

1.1.1 **Գլդոն JCB,** գլդոն 12-18 տ , **արտադրման տարեթիվը 2017 թ , գրանցման համարանիշը :**

1.2 Վարձակալական վճարի **ժամավճարի չափը մեկ հազար ՀՀ դրամ /1 000/ ԱՄՀ-ով :**

## 2. ՎԱՐՁԱՏՈՒԻ ԵՎ ՎԱՐՁԱԿԱԼԻ ՊԱՐՏԱՎՈՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

2.1 Վարձատուն պարտավորվում է՝

- գույքը հետագա շահագործման նպատակով սարքին վիճակով հանձնել Վարձակալին,
- Գույքը վարձակալության տալ նրա բոլոր պարագաներով եւ դրան վերաբերվող փաստաթղթերով,
- ժամկետից շուտ պայմանագրի լուծարումը կատարել գրավոր նախազգուշացումից հետո

2.2 Վարձակալը պարտավորվում է՝

- ժամանակին վճարել Վարձատուին՝ յուրաքանչյուր ամսվա համար մինչև հաջորդ ամսվա 10,
- վարձակալած գույքը շահագործել նպատակային՝ պահպանելով շահագործման եւ տեխնիկայի անվտանգության նորմաները,
- կրել վառելիքի, էլեկտրաէներգիայի, աշպատավարձի, ինչպես նաեւ վարձակալած գույքի ընթացիկ վերանորոգման եւ վարձակալված գույքի պահպանման ծախսերը,
- վարձակալած գույքը ետ վերադարձնել այն վիճակում, ինչպես այն ստացվել է հաշվի առնելով նորմալ մաշվածությունը,
- վարձավճարի ժամկետից ուշացման դեպքում սահմանել տույժ 0,5%-ի չափով յուրաքանչյուր ուշացած օրվա համար

## 3. ՊԱՅՄԱՆԱԳՐԻՑ ԺԱՄԿԵՏԻՑ ՇՈՒՏ ԼՈՒԾԱՐՈՒՄԸ

3.1 Սույն պայմանագիրը կարող է ժամկետից շուտ լուծարվել հետևյալ դեպքում

- երբ վարձակալը գույքը օգտագործում է ոչ նպատակային
- երբ աշխատանքի ընթացքում էապես վատթարանում է գույքի վիճակը

## 4. ԵԶՐԱՓԱԿԻՉ ԴՐՈՒՅԹՆԵՐ

4.1 Վարձակալության մնացած պայմանները, որոնք չեն նախաձեռնված սույն պայմաններում, պարտավորվում են ՀՀ գործող օրենսդրությամբ:

4.2 Սույն պայմանագիրը ուժի մեջ է մտնում ստորագրության պահից եւ գործում է մինչեւ սույն պայմանագրով սահմանված Կողմերի պարտավորությունների ամբողջական կատարումը:
4.3 Սույն պայմանագիրը կազմված է 2 օրինակից, որոնք ունեն հավասար իրավաբանական ուժ:

## 5. ԿՈՂՄԵՐԻ ՀԱՍՑԵՆԵՐԸ ԵՒ ՌԵԿՎԻԶԻՏՆԵՐԸ

| «ՎԱՐՁԱՏՈՒ»՝ | «ՎԱՐՁԱԿԱԼ»՝ |
|---|---|
| «ՊՐՈՖԱՐՏ » ՍՊԸ | « ՆԱՏԱԼԻ ՇԻՆ » ՍՊԸ |
| ՀՀ, Արարատ, Այգեզարդ Գայի փ. տ33 | Արարատի մ, գ. ԱՅԳԵԶԱՐԴ, Իսահակյան փ., Տ 7 |
| ՀՎՀՀ 04251173 | ՀՎՀՀ 04237166 |
| Հ/Հ 1220013336981000 | Հ/Հ 220013337435000 |
| «ԱԿԲԱ բանկ » ՓԲԸ «Արտաշատ » մ/ճ | «ԱԿԲԱ ԲԱՆԿ» ՓԲԸ |
| սեփականատեր__________ Վահե Մարգարյան | Տնօրեն______________Ա. Ավետիսյան |